

## ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԿՈՆԴԱԿ

ՍՈՎԵԼՈՅ ԵՒ ԿԱՐՈՏԵԱԼՆԵՐԻ ԱՌԻԹՈՎ.

Մկրտիչ Յառայ Յիսուսի Քրիստոսի և Ողորմութեամբ Աստուծոյ Կաթողիկոս Ամենայն Հայոց Մայրագոյն Պատրիարք Համագոգական Նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ Սրբոյ Կաթողիկէ Եջմիածնի:

Աւետարանի սիրոյ ողջոցն մատուցանել առ ամենայն Եկեղեցիս Հայոց, որք կան ընդ հովանեաւ Մեծին Ռուսիոյ Խնքնակալ Թագաւորութեան: Ազօթս առնեմ վասն ձեր ամենեցուն հանգերձ միաբանական ուխտիւս, կալ մնալ ձեզ ի շնորհս Տեառն ի ճշմարիտ հաւասա Աստւածապաշտութեան ի սէր և ի պատւիրան Աւետարանի ընկերութեան. որոյ յայտնացոյց նշանաւ միայն ճանաչէ զձեզ աշխարհ թէ դուք Քրիստոսին էք և Քրիստոս ձեր:

Յետ ողջունական բանիս, այժմ մասնաւոր կոնդակաւս պիտի խօսիմ ընդ քեզ, ժողովուրդ Հայոց, պարզ լեզով և ոճով, որպէս զի դու չքմեզս լինելով չասես թէ չեմ հասկանար և չեմ իմանար զրոց լեզուն և այլն:

Ես զիտեմ քս բնաւորութիւն, դու շուտով կը գայթակղիս և գուցէ մեղադրելով կասես. Հայրիկ գնաց կաթողիկոս եղաւ. մուացաւ իւր պարոք և ամեն բան. միայն մի անգամ չոր ողջունի կոնդակ մի հրատարակեց, ոչ խրատ խօսեց, ոչ պատւէր տեաւ, բերան փակեց, զրիչ վար դրաւ և այնպէս անհոգ նստած է Եջմիածնայ վեհարանում. չգիտենք, ի՞նչ կը խորհի, ի՞նչ կը մտածէ և ի՞նչ պիտի անէ, սպասում ենք և համբերութիւն հատաւ:

Այն այգպէս կը թւիմէ դատողաց առաջ, որովհետեւ չկամիմ փող հարկանել ի հրապարակս, այլ պէտք է պատմեմ քեզ, որ դու

իմանաս, խելամուտ լինիս, համբերես ու կարճես քո մեղադրանքը:  
Քաւ թէ ես կը սրտմտիմ կամ խուսափել կուզեմ քո մեղա-  
դրանքն. զի քաջ գիտեմ թէ ացգափս եղեր է մեր նախորդաց և  
ինձ համար էլ պիտի լինի, և ով կարող է բազմամիտ, բազմաբե-  
րան և պահանջող ժողովրդի դատաստանէն խոյս տալ:

Օրհնեալ լինի, ժողովուրդ, դատել պահանջել իւր իրաւունքն  
է, եթէ չդատի, չպահանջէ՝ գիտեմ ես թէ էն ժամանակը մեք  
որչափ անհոդ և անպիտան կը դառնամք. միայն թէ ուղիղ դատի,  
ապրաժամ չպահանջէ և գիտենայ ժամանակ և թէ որչափ պա-  
հանջել պէսք է. «Չի ամենայն իրաց՝ ժամ է և ժամանակ» ասում  
է Աղոյուն:

Դու իմանալ կուզես թէ ի՞նչ կը խորհի Հայրիկ. ի՞նչ պիտի  
խորհի, Սաղմոս կը կարդայ, Երանի որ խորհի զաղքատն և զտնանկն»:  
Այժմ թողած ամեն բան, աղքատներու համար կը խորհիմ. սոված  
ժողովրդեան համար կը խորհիմ: Եւ այս հրաւէր կարդամ քեզ, ժո-  
ղովուրդ հայոց, որ դու էլ պահ մի թողուս ամեն բան և միայն  
աղքատին համար խորհիս. որպէս զի Դաւթի և Յիսուսի երանու-  
թեանց արժանի լինիս: Արդ սկսիմ մի համառօտ հաշիւ տալ քեզ  
և դու իմանաս թէ Հայրիկ իւր միաբանութեամբ ի՞նչ զինակում  
ու աշարւած ու պարաւանդւած է:

Այսօր զրեթէ վեցերորդ ամիսն է այն օրէն, երբ ես արժանի  
եղաց ողջունել Էջմիածնայ Մայր Աթոռ՝ շուտ անցան գնացին այն-  
չափ ովսաննաներ և մեծադղորդ կեցցէներն և այժմ խոր լռու-  
թիւն և տիրութիւն տիրեցին մեր շրջապատը և միայն լսում  
են անօթի, քաղցած գիւղական ժողովուրդին և ընտանեաց ման-  
րիկ զաւակներուն լացն ու աղաղակ:

Վեց ամսեայ միջոցում զրեթէ հազարէն շատ աւելի զանա-  
գան խնդիրներ եկան կուտւեցան առաջս: Այդ խնդիրներ բազմա-  
տեսակ էին, մեծ մասն ամուսնական կնճռալից գործեր էին, որք  
խնդրում էին լուծել և շուտափոյթ լուծել: Մի մասն ևս գիւղա-  
կան ժողովրդի խնդիրներ էին, որք դաս-դաս խմբովին եկան ներ-  
կայացան հետզհետէ և մատուցին իրենց համախօսական թղթեր,  
որոց թիւ հասնում էր մինչև հարիւր լիսունէն աւելի, և ի՞նչ էին  
խնդրում. Հայրիկ, քահանայ կուզեմք, քահանայ:

տելով ասում էին, Հայրիկ, մեր գիւղեր՝ կան որ հինգ տարի, ութ տարի և մինչև տասն տարի է, որ ծխառակը ու սեփական քահանաց չունիմք, որչափ դժւարութեամբ ուրիշ գեղաններէ քահանաց կը մուրամք, մանաւանդ ձմեռը ձիւն ու բուք եղած ժամանակ։ Ոմանք թէ, մեր գիւղերու քահանաներ ութսուն տարին անցուցած, խիստ ծերացած զառամութեան վիճակին հասած են, էլ չեն կարող պաշտօն կատարել։ Ժողովուրդի այս խնդրոց համար չեմ ուզեր մանրամասն դրել. «Արարատի» մէջ թող կարդան լնթերցողներ Արշէն էր կցի քարոզ։

Այս խնդիրներ ամեն ժամանակ սովորաբար եղած են և այնքան վհասեցուցիչ չեն, որ և իցէ եղանակաւ կարելի է լուծել, կարգադրել և գոհ անել խնդրատուներն։

Բայց եկ տես, որ խնդրոց ամենամեծ մասն՝ գաղթականաց խնդիրն է, բոլորովին չքաւորած, կտոր մի հացի կարօտ գիւղական ժողովուրդի պահատանքն է, որմնք խումբ-խումբ իրենց ընտանիքով, մանրիկ զաւակներով սկսեալ աշնանէն մինչև ցայսօր կուգան կը լեցւին էջմիածնաց Հայրապետանոցը։ Եւ տես դու ի՞նչ անհանդուրժելի տեսարան բայցում է մարդւոյն աչքին առաջ։ Եւ ով կարող է զթուա աչքով նացել ու չարտասել։

Գիտես թէ լքեալ ու յուսահատ ժողովուրդի հոգին իւր անձկութեան մէջ բանաստեղծ կը դառնայ, և քանի՞ բնական ու սրտառուշ նկարագիր կը հանէ թղթերուն վրայ և իւր կրած ցաւեր պատմելու մի ճարտասան կը լինի։ Ես մոիկ արի վշտագին ոդւով, դուք էլ մոիկ արէք, ժողովուրդ Հայոց, և տեսէք ի՞նչ կասեն։

Հայրիկ՝ մեք ոչ ամուսնական խնդիր ունիմք և ոչ քահանացի, մեք թողինք մեր քահանացն մեր գիւղի եկեղեցւոյն պահապան։ Եկեղեցին ու քահանացն մնացին առանց ժողովրդի, թողինք մեր շտեմարան, ալիւրի փեթակ, հացն ու թոնիր. տանտիկին ելաւ տնէն, կարեցաւ ծուխն երդիքէն, թողինք մասնի եղեր, լի ամաներով պանիրներ, թողինք մեր կանաչ արտեր, մեր գութան ու հարօններ, թողինք աննման Ալաշկերտու հայրենիք։ Հապա մեր սուրբ Յովհաննու երեքխորան վանք, նպատ լեռ. Եփրատաջ սուրբ գետ, ամեն մեր ի՞նչքեր կողուպուտ տւինք, առինք միայն մեր ընտանիք հարաներ ու հասած աղջիկներ, եկանք ըրիստոնեաց երկրին

ապաստանեցանք; Մեր շատ զոհեր տւինք մեր ընտանեաց սիրոյն համար, որպէս զի ազատենք զանոնք առեւանդող բիրու քիւրտերուն ձեռքէն; Ե՛, Հայրիկ, մեք այժմ ուրիշ բան չենք խնդրեր, մեզ պէտք է միայն պատսպարան ու հաց, զի մեք անտուն անօթևան մնացինք:

Այսպէս, ժողովուրդ Հայոց, աղէսներ սեպհական որջ ունին, երինից թռչուններ բոյն, ինչպէս ասաց Քրիստոս որ գլուխ դնելու տեղ չունէր; Միթէ Քրիստոսի նման իւր հաւատացեալ դադական ժողովուրդ ունի իւր զլուխ դնելու տեղ:

Կարսի սահմանագլխէն սկսեալ գաղթական ժողովուրդի տարածութեան մի ծայր հասած է մինչև Երևանաց դաշտի գիւղեր. թէւ մեծագոյն մասն Կարսի նահանգում տեղաւորւած են; Զեմ մոււանաց երախտագէտ ոգով յիշել աստ և յանուն ազգին յայանել իմ շնորհակալութիւնս Երևանաց և Կարսի նահանգապետներուն, որք բարձրագոյն համանաւ և իրենց բարեսիրու ազնուութեամբ թոյլ տւին գաղթական անտերունչ ժողովրդին, որ մինչև գարնան հիւրընկալւին Հայոց գիւղերում:

Եւ ի՞նչ պիտի լինի գարուն, որ եկաւ ահա, միթէ անաշխարհի անբնակ բունաւեր թռչուոց համար գարուն աւետաբեր է; Որոց համար աւազ, որչմի յարմար է բանաստեղծին երդ. «Ինձ համար չէ գարնան գալը»:

Նոքա պիտի յիշեն Բագրեանդայ և Սուկաւէտ ծաղկազարդ ու ջրաշատ լեռան գարուն:

Օրհնեալ լինին Շիրակայ և Արարատեան դաշտերու գիւղական բնիկ Հայ՝ ողովուրդներ, որք հիւրասէր հայր Աբրահամու պէս իրենց դռներ բացին, ուր մոան տեղաւորեցան խեղճ ու թշւառ գաղթական ընտանիքներ:

Քանի դառն ու դժար է, Բագրեանդայ ճոխ տանուտէր, որոյ զուռ բաց էր, հացալից սեղան պատրաստ ամեն հիւրերուն, նա մարագի մի քունչ հաւու պէս ծւարեցաւ իւր լնտանիքով և ձագերով և լաւագոյն համարեց այս խղճուկ կեանքը, որ ազատեցաւ քիւրտերու սոսկալի բռնութենէն:

Այսպէս առ ժամանակ մի թէպէտ գիւղերում զետեղւած են գաղթական լնտանիք, այլ ամեն օր և շաբաթ գիմում են Մայր

Աթոռի դուռը, ոչ միայն կարօտութեան համար, զի մեզ շատ յայսնի է նոցա դառնավիշտ վիճակ, թողունք օրապահիկ հացի սնունդ. կը տեսնամ աչքովս իւրեանց պատառոտած կերպարանք սոսկ կտաէ շապկի մի կարօտ, մանկիկներ մերկ ու բորբիկ: Զարչարանքի վարժւած ժողովուրդը գետ համբերում է այս տառապանքի մէջ և իւր ապագայն մտածելով հարցնում է, Հայրիկ, մեր վոխճանը թնչ պիտի լինի:

Իսկ ես խոր մտածութեան մէջ վարանած, չգիտեմ թէ ինչ պատասխանեմ կամ յուսադրեմ այդ լքեալ ու վհատեալ ժողովուրդ. կըսկսիմ վարդապետական քարոզ կարդալ, ամէն բան ու ժամանակի հանգամանքներ պարզ կերպով բացատրել իրենց և յորդորել, որ գարձեալ իրենց հայրենիք վերադառնան, վասն զի կարելի չէ, որ Արարատեան երկիր նոր գաղթականութիւն ընդունի, որովհետև իւր բնիկ ժողովուրդ այնչափ աճեր ու բազմապատկեր է, որ այլևս մշակելի հողեր բաւական չեն իրենց համար. դուք մի յուսաք թէ բնիկ երկրին ժողովուրդ թիզ մի տեղ ձեզ բաժին կուտայ. հաց ու պատսսլարան տուաւ ձեզ մի փոքր ժամանակի համար, կարծում էք հող էլ պիտի տայ:

Դուք ձեր Ալաշկերտի դաշտում շատ հարուստ էիք ձեր ընդարձակ հողերով և իբրև տանուտէր կասրէիք, գիտէք թնչ դառն է ձեզ համար երբ հողասիրութիւնէն զրկւելով՝ ծառաց և մշակ դառնաք այսաեղ, և այնտեղ ձեր սեպհական հողերը օտարներ գրաւեն:

Չէ, Հայրիկ, չէ, դու չգիտես, մեր քաշած անտանելի զրկանքներ, թէ միայն ընչից յափշտակութիւն լինէր, այդ ոչինչ էր, զի մեք շատ վազուց ի վեր սովորած եմք այդ կերպ զրկանքներուն, բայց մեր աչքի առաջ մեր ամուսիններ և մեր աղջիկները ամենայն բռնութեամբ վայրենի քրդեր յափշտակում են և կը տանին բռնի կերպով Քրիստոսի հաւատաք ուրանալ կուտան. այլ ես մեք կարող եմք հանդուրժել:

Թող, Հայրիկ, թող, մեք ծառաց լինիմք, մշակ դառնամք միայն ապահով ապրինք մեր ընտանիքով ու զաւակներով:

Այսպէս կը մտածի կը խօսի ու պատասխան կուտայ վշտակիր ժողովուրդ և ովք կարող է մեղադրի զինքն:

Թողունք գաղթական ժողովրդին այս ցաւն ու տառապանք,

մի այլ տառապանք ևս տառապանքի վերայ ծանրանալով՝ սաստկապէս ճնշում է Մայր Աթոռը:

Յայտնի է, որ երկու տարի իրարու վերայ երաշտութիւն լինելով՝ երկինք անձրև չի տւաւ որ երկիր հաց բուսցնէր. ուստի Արարատեան դաշտի և մի քանի ուրիշ գաւառներու գիւղական ժողովուրդ փող չունի. սորա համար ճարահատած խումբ խումբ զիմում են Մայր Աթոռին իրեւ նորա հոգեծին զաւակներ ժտում են կամ հաց կամ փող և ուրիշ ոչինչ:

Այսպէս քաղցած ու նեղացած մեր կուսաւորիչ սուրբ հօր որդիքներ իրաւունք ունին իրենց Հօր տան և Աթոռին դիմել, հապա Հայրին ում դիմէ, ասացէք ժողովուրդ Հայոց, եթէ ոչ առ ձեզ:

Ուստի հրաւէր կարգալով առ բոլոր սիրելի ազգայինս Ռուսիոյ, կոշեմ զձեզ ի զժութիւն, ի կարեկցութիւն գիւղական քաղցած ժողովուրդին: Ոչ եթէ խնդրում եմ, որ համայն ազգայինք հաւասարապէս ընդհանուր հանգանակութիւն բանան, զի այդ մասին բարձրագոյն հրամանի պէտք կայ, այլ մասնաւորապէս կարսղ անձիքներէն կամաւոր նպաստ և ողորմութիւն կը խընդրեմ յանուն աղքատին, որ զիս իրեւ իւր ձեռք կարկառում է:

Կարկառեցէք ուրեմն և դուք ձեր ձեռք այն բազմաթիւ աղքատ զագարսոներուն, որոնք էջմիածնայ տաճարին տակ շարւած սպասում են կոչնակի ձախնին, տեսնանք թէ թնչպէս վազելով կը թափին ի սեղանատուն: Միացն իրենց փոր կըշտացնելով բաւական չէ, այլ սեղանէն ելնելով կը ժողվին Վեհարանին և գանձատան զրան առաջ և սկսում են իրեանց «ՀԱՅՐ ՄԵՐ», այսպէս. մեր փորը կշտացաւ, Աստւած շէն պահէ Սուրբ էջմիածնայ վանք, բայց Հայրիկ, մեր ընտանիք, մեր մանրիկ տղէք անօթի նւաղած են, տան մէջ հալած աչքերով սպասում են որ շուտով դառնամք իրենց օրապահիկ հաց տանեմք: Երկու երեք օրով անօթի մայրեր կան, որոց ծծերուն կաթ ցամաքած է, կաթնկեր երեխաներն էլ իրենց գրկին մէջ ցամքած ու մարած են, Աստուծոյ սիրոյն լինի, տւէք մեզ հաց կամ փող, տանենք հասուցենք մեր սոված ընտանիքներուն:

Այս նկարագիր պիտի շարժէ անշուշտ մեր ազնւագութ մեծատանց և ամեն դասակարգ ժողովրդին սիրտ. պիտի շարժէ նաև Հայոց մայրերու սիրտ, իրենց առատ և ճոխ սեղանի փշրանք-

Ներէն բաժին հանել աղքատ զազարոսներուն։ Երանի՛ թէ ես էլ արժանի լինիմ կատարել իմ հայրական պարտիքս և իբրև սպասաւոր մատակարարեմ այդ փշրանքներ կարօտած խեղճերուն։

Խոստովանիլ պէտք է որ մեր սակաւ փշրանքներ նոպաստ և ողորմութիւն մի մի կաթիլ ջուր են, երբէք չեն բաւական պատքած ժողովուրդին ծարաւն անցունել, դորա համար մի յորդառատ գետ պէտք է, և այդ գետ բղխում է Մեր Մեծ խնամակալ Կայսեր տէրութեան ակնէն, որ իբրև երկնուց Հօր պատկեր ներկայացնում է աշխարհին վերալ. գիտէ Նորին Մեծութիւն իւր բարի կամք ի գործ դնել. և առատապէս բանալով իւր անսպառ աղբիւրին ակն և լիապէս ջուր տալ իւր հաւատարիմ հաղատակ ծարաւած ժողովրդին։

Եւ ինձ կը մնայ յայնժամ աղօթել և հանապազ աղօթել մեր գթառատ Կայսեր թանկագին կենաց համար, որոյ կեանքը բովանդակ երկրին և ժողովրդի բարօրութեան կեանքն է։

Աղօթեմ և վասն Զեր, ժողովուրդ Հայոց, գուք ևս ընդունելով Հայրիկին հրաւէր ձեր փոքրիկ փոքրիկ աղբերակներու ակներ բանաթ և ծարաւած ժողովրդին բաժակ բաժակ ջուր բաշխէք, գիտելով և հաւատալով որ վանձատրիչ Տէր Սատւած ձեր բաժակներու փոխարէն երկնից արքայութեան դրախտի գետերէն պիտի բաշխէ, որոյ ջուրն կենաց անմահական ջուր է։

Իցիւ թէ արժանի անէ Տէր ամեն ծարաւած հոգիներուն ըմակել այդ կենաց ջուրէն և օրհնել զանուն նորա յաւիտեանս։ Ամէն։

(Խսկականի վերայ ստորագրած է)

### Ս Կ Ր Տ Ի Զ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՅ ՀԱՅՈՑ

Գրեցաւ Կոնդակս ի 28 Մարտի 1894  
ամի Փրկչական եւ ըստ տումարիս ՌՅԽԳ,  
ի Մայր Աթոռս Հայաստանեաց ի Ս.  
Էջմիածին ի Վաղարշապատ։